

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ԳՀԾՁԲ-21/02-2»**

ք. Երևան

«12» մարտի 2021 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:



2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ՝ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում՝ Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝** ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

4-րդ չափաբաժնի համար՝ առավելագույնը 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն,

5-րդ չափաբաժնի համար՝ առավելագույնը 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:¹ Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

¹ Պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին. տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանալին պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում՝ սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում՝ պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 34 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

Դարական դեպարտամենտ


Հասցե՝ ք. Երևան, Կոլյունի 15/1, 17

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան



(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31

ՀՎՀՀ՝ 00873228

Հ/Հ՝ 1510012745550100

«Արարատրանկ»ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Գալստյան



(ստորագրություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագրի ընդհանուր | մատուցվող ծառայության ատավելագրյան միավորի գին | ծառայության մատուցման համար սահմանված ատավելագրյան միավոր գների հանրա գումար | ընտրված մասնագիտացված /արտադրող/ գին | կնքվելիք պայմանագրի ընդհանուր /ատավելագրյան/ գին/ գինը | չափման միավորը | ընդհանուր քանակը | մատուցման | |
|--------------------------------------|---|--|-----------------------------------|--|--|--------------------------------------|--|----------------|------------------|-----------|---|
| | | | | | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 4 | 50111130/7 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Toyota Camry 2.5/ | Համաձայն կից ներկայացված ցանկ 4-ի | 14881800 | 5952720 | 300000 | դրամ | դրամ | 1 | բ. Երևան | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտավորությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու 20-րդ օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 24-ը: |
| 5 | 50111130/11 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Toyota Camry 2.4/ | Համաձայն կից ներկայացված ցանկ 5-ի | 22419500 | 8967800 | 150000 | դրամ | դրամ | 1 | բ. Երևան | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտավորությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու 20-րդ օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 24-ը: |

Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրված ֆեդերալիզացիայի միջոցը Կատարողի փոխապատասխան կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:
 *Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրամադրության միջոցը Կատարողի փոխապատասխան կայանում գրանցվելու օրվանից հաջորդ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող պահեստամասերը տվյալ պահին առկա չեն, Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:

Յուրաքանչյուր անդամներն ապահովված են և նորոգման համար՝ Պարվիրատուի պահանջով Կարարողի կողմից կազմվում, կնքվում և պարվիրատուին է ներկայացվում նախնական գնման և գնահատման ակտ:

Այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է փոխարինել նորով, որոնց համար պետք է րբվի առնվազն 6 ամիս երաշխադրային ժամկետ:

Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17

Հ/Հ՝ 900011192151


ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար Կ. Փոլադյան

/ստորագրություն/

Կ.Տ



ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31

ՀՎՀՀ՝ 00873228


Հ/Հ՝ 1510012745550100

«Արարատբանկ»ԲԲԸ

Տնօրեն, Է. Գամպուրյան

/ստորագրություն/

Կ.Տ



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

«Հ դրամ


| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության | | | | | | | | | | Ընդամենը | | | |
|--------------------------------------|---|--|---|--------|--------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|----------|--------|--------|--------|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | | | | |
| 4 | 50111130/7 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Toyota Camry 2.5/ | 30000 | 105000 | 105000 | 105000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 300000 | 300000 | 300000 | 300000 | 300000 | 300000 |
| 5 | 50111130/11 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Toyota Camry 2.4/ | 15000 | 52500 | 52500 | 52500 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 150000 | 150000 | 150000 | 150000 | 150000 | 150000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դարական դեպարտամենտ
 Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
 Հ/Հ՝ 900011192151
 ՀՎՀՀ՝ 02583241
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան



/ստորագրություն/
 Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
 Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 ՀՎՀՀ՝ 00873228
 Հ/Հ՝ 1510012745550100
 «Արարատբանկ»ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Գասպարյան



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Մատուցված ծառայությունների | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման անակացույցի/ |
|---|-----------|---|--|---------|--|---------|-------------------------------------|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|-------------|----------------|---------------------|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ցանկ 4

| Հ/հ | SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցի անվանում |
|-----|--|-------------------------------|
| | | Toyota Camry 2.5l, 2011թ. |
| 1 | 2 | 3 |
| | SU-1 ներառվող ծառայությունների անվանումները | դրամ |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 3000 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 3000 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 3000 |
| 4 | Արտածման համակարգի ստուգում | 3000 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 3000 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | 3000 |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | 3000 |
| 8 | Կրադանային փոխանցման տուփի ստուգում | 3000 |
| 9 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | 3000 |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 3000 |
| 11 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 3000 |
| 12 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 3000 |
| 13 | ABS համակարգի ստուգում | 3000 |
| 14 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3000 |
| 15 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 3000 |
| 16 | Թափքի վիճակի ստուգում | 3000 |
| 17 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 3000 |
| | SU-2 ներառվող ծառայությունների անվանումները | |
| | 1. Շարժիչ | |
| 18 | Շարժիչի հանում և տեղադրում | 70000 |
| 19 | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | 320000 |
| 20 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 12000 |
| 21 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 25000 |
| 22 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 65000 |
| 23 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | 180000 |
| 24 | Շարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտաբուկերով | 5000 |
| 25 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | 5000 |
| 26 | Շարժիչի փականի զսպանակի փոխարինում | 3000 |
| 27 | Փականի խցուկի փոխարինում | 1500 |
| 28 | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում | 5000 |
| 29 | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 40000 |
| 30 | Ծնկաձև լիսեռի հղկում | 45000 |
| 31 | Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում | 30000 |
| 32 | Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ | 30000 |
| 33 | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում | 10000 |
| 34 | Ծնկաձև լիսեռի ուղղում | 25000 |
| 35 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 15000 |
| 36 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 60000 |
| 37 | Շարժիչի բլոկի փոխարինում | 140000 |
| 38 | Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка) | 20000 |
| 39 | Մխոցի փոխարինում 1 հատ | 30000 |
| 40 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | 50000 |
| 41 | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 42 | Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում | 5000 |
| 43 | Փոկանիվի փոխարինում | 5000 |
| 44 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում | |
| 45 | Շարժիչի շղթայի փոխարինում | 80000 |
| 46 | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում) | 5000 |
| 47 | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում | 5000 |
| 48 | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով | 15000 |

| | | |
|-----|--|-------|
| 49 | Շարժիչի յուղի մղիչի փոխանակում | 25000 |
| 50 | Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում | 15000 |
| 51 | Շարժիչի յուղի մղիչի մաքրում | 5000 |
| 52 | Յուղի ծորակի փոխարինում | 5000 |
| 53 | Օղաքաշակ փողրակի փոխարինում | 5000 |
| 54 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 30000 |
| 55 | Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում | 30000 |
| 56 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | 50000 |
| 57 | Շարժիչի կափույրի փոխարինում | 25000 |
| 58 | Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում | 25000 |
| 59 | Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ | 25000 |
| 60 | Մխոցային օղակների փոխարինում 1 հատ | 25000 |
| 61 | Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում | 15000 |
| 62 | Ատամանիվի փոխարինում | 8000 |
| 63 | Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում | |
| 64 | Սուխարիկի փոխարինում 1 կ-տ | 15000 |
| 65 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | 25000 |
| 66 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | 10000 |
| 67 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում | 5000 |
| 68 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով | 15000 |
| 69 | Շարժիչի յուղի արանքաչափի (ՔՅՏ) իրանի փոխարինում | 5000 |
| 70 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | 15000 |
| 71 | Շարժիչի գամասեղի փոխարինում | 3000 |
| 72 | Գլխիկի հեղույսի փոխարինում | 3000 |
| 73 | Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում | 3000 |
| 74 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում | 50000 |
| 75 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | 35000 |
| | 2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | |
| 76 | Ավտոմեքենայի յուղում | 2000 |
| 77 | Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ | 8000 |
| 78 | Յուղի պոմպի փոխարինում | 45000 |
| 79 | Յուղի ռադիատորի փոխարինում | 35000 |
| 80 | Յուղի ռադիատորի նորոգում | 10000 |
| 81 | Շարժիչի կոլեկտորի փոխարինում | 30000 |
| 82 | Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում | 20000 |
| 83 | Վառուցքի մոմի փոխարինում 1 հատ | 6000 |
| 84 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | 15000 |
| 85 | Օդի զտիչի փոխարինում | 6000 |
| 86 | Սրահի օդի զտիչի փոխարինում | 6000 |
| 87 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 |
| 88 | Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում | 5000 |
| 89 | Ինժեկտորի բոցամուղի փոխարինում | 8000 |
| 90 | Ինժեկտորի բոցամուղի մաքրում | 8000 |
| 91 | Բոցամուղի կողավորում | 15000 |
| 92 | Ինժեկտորի բոցամուղի խտաբուկների փոխարինում | 5000 |
| 93 | Բենզամղիչի փոխարինում | 16000 |
| 94 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում | 15000 |
| 95 | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 96 | Բռնկման կարգավորում | 5000 |
| 97 | ՕՕ կարգավորում | 5000 |
| 98 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 |
| 99 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 25000 |
| 100 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 101 | Վառելիքի բաքի մաքրում | 15000 |
| 102 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | 15000 |
| 103 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | 15000 |

| | | |
|-----|---|--------|
| 104 | Ջրի խողովակի, փողոցակի փոխարինում | 15000 |
| 105 | Բենզոբաքի բենզամոնիչի ցանցի փոխարինում | 5000 |
| 106 | Բենզոբաքի բենզամոնիչի ցանցի մաքրում | 2000 |
| 107 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | 10000 |
| 108 | Տվիչի փոխարինում | 10000 |
| | 3. Սառեցման և արտաձման համակարգ | |
| 109 | Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 24000 |
| 110 | Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 111 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 45000 |
| 112 | Ռադիատորի նորոգում | 45000 |
| 113 | Շերտափեղկի փոխարինում | 20000 |
| 114 | Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում | 5000 |
| 115 | Ընդարձակող բաքի փոխարինում | 8000 |
| 116 | Ընդարձակող բաքի փողոցակի փոխարինում | 2000 |
| 117 | Ջրի ծորակի փոխարինում | 5000 |
| 118 | Հովացման համակարգի ռետինե փողոցակի փոխարինում | 5000 |
| 119 | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 120 | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ | 60000 |
| 121 | Վառարանի ռադիատորի նորոգում | 20000 |
| 122 | Վառարանի շարժիչի փոխարինում | 20000 |
| 123 | Թերմոստատի փոխարինում | 15000 |
| 124 | Ջրի մոնիչի փոխարինում միջադիրով | 25000 |
| 125 | Ջրի մոնիչի միջադիրի փոխարինում | 5000 |
| 126 | Գեներատորի փոկի փոխարինում | 10000 |
| 127 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում | 8000 |
| 128 | Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 129 | Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում | 10000 |
| 130 | Խլարարի անոթի (xamyr) փոխարինում | 1000 |
| 131 | Խլարարի ներդիրի փոխարինում | 5000 |
| 132 | Խլարարի կախցի փոխարինում | 2000 |
| 133 | Հովացման հեղուկի փոխարինում | 3000 |
| | 4. Կցորդում և ՓՏ | |
| 134 | Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 135 | Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում | 25000 |
| 136 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | |
| 137 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 138 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 139 | Կցորդման փողոցակի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 140 | Կցորդման երկժանիի փոխարինում | |
| 141 | ՓՏ-ի հիմնական նորոգում | |
| 142 | ԱՓՏ-ի հիմնական նորոգում | 400000 |
| 143 | ՓՏ-ի հավաքածույի փոխարինում | 35000 |
| 144 | ՓՏ-ի առցնի խտաբուկի փոխարինում | 15000 |
| 145 | ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում | 15000 |
| 146 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 40000 |
| 147 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | 65000 |
| 148 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 15000 |
| 149 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում | 25000 |
| 150 | ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում | 25000 |
| 151 | ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում | 25000 |
| 152 | ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում | 25000 |
| 153 | ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում | 35000 |
| 154 | ՓՏ-ի բարձիկի փոխարինում | 15000 |
| 155 | ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում | 13500 |
| 156 | ՓՏ-ի յուղի փոխարինում | 5000 |
| 157 | ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում | 25000 |
| 158 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 80000 |

| | | |
|---|---|-------|
| 159 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 70000 |
| 160 | Վազքաչափի շարժաքերի փոխարինում | 5000 |
| 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | |
| 161 | Բաշխիչ տուփի հիմնական նորոգում | |
| 162 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 163 | Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում | |
| 164 | Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում | |
| 165 | Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում | |
| 166 | Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում | |
| 167 | Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում | |
| 168 | Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում | |
| 169 | Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում | |
| 170 | Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում | |
| 171 | Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում | |
| 172 | Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում | |
| 173 | Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում | |
| 174 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 175 | Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում | |
| 176 | Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 177 | Տվիչի փոխարինում | |
| 178 | Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում | |
| 179 | Կարդանային լիսեռի միջին կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 6. Առջևի և հետևի կամրջակներ | | |
| 180 | Առջևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 181 | Առջևի կամրջակի կիսաստնում առանցքակալի փոխարինում | 13000 |
| 182 | Առջևի կամրջակի կիսաստնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում | 5000 |
| 183 | Կամրջակի յուղի փոխարինում | 5000 |
| 184 | Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում | 40000 |
| 185 | Հետևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 186 | Հետևի կամրջակի կիսաստնում առանցքակալի փոխարինում | |
| 187 | Հետևի կամրջակի կիսաստնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում | |
| 188 | Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում | |
| 189 | Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում | |
| 190 | Հետևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում | |
| 191 | Կամրջակի տվիչի փոխարինում | 5000 |
| 7. Կախոց | | |
| 192 | Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում | 45000 |
| 193 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում | 14000 |
| 194 | Առջևի անվակունդի առանցքակալների փոխարինում | 13000 |
| 195 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 13000 |
| 196 | Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 13000 |
| 197 | Հետևի անվակունդի առանցքակալների փոխարինում | 13000 |
| 198 | Անվակունդի համասեղի և հեղուցի փոխարինում | 4000 |
| 199 | Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում | 8000 |
| 200 | Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 15000 |
| 201 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 6000 |
| 202 | Առջևի զսպանակի փոխարինում | 6000 |
| 203 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 204 | Հարվածամեղմիչի վռանների փոխարինում | 4000 |
| 205 | Ներքին լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 206 | Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | 6000 |
| 207 | Ներքևի լծակի հեղուցի փոխարինում | 2000 |
| 208 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 8000 |
| 209 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 8000 |
| 210 | Հարվածիչի (բարձիկի փոխարինում) | 2000 |
| 211 | Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 9000 |
| 212 | Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | 9000 |

| | | |
|-----|---|-------|
| 213 | Վերևի լծակի հեղույսի փոխարինում | 2000 |
| 214 | Հետևի վերևի լծակի վրանի փոխարինում 1 հատ | 9000 |
| 215 | Գնդե հողակապերի պատյանի փոխարինում | 3000 |
| 216 | Գնդե հողակապերի փոխարինում | 15000 |
| 217 | Ծայրակալների հանում և տեղադրում | 9000 |
| 218 | Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 219 | Առջևի կայունարարի վրանների փոխարինում | 6000 |
| 220 | Հետևի կայունարարի փոխարինում | 12000 |
| 221 | Կայունարարի կանգնակի փոխարինում | 8000 |
| 222 | Հետևի զսպանակների փոխարինում | 8000 |
| 223 | Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 224 | Հետևի երկաթածողի հանում և տեղադրում | 9000 |
| 225 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 9000 |
| 226 | Զսպանի փոխարինում | 20000 |
| 227 | Զսպանի վրանների փոխարինում 1 հատ | 5000 |
| 228 | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | 10000 |
| 229 | Հետևի հարվածամեղմիչի վրանների փոխարինում | 2000 |
| 230 | Անկյունագծային լծակի վրանների փոխարինում 1հատ | 9000 |
| | 8. Ղեկային մեխանիզմ | |
| 231 | Ղեկասյունակի (USuSվՍՈ) հիմնական նորոգում, | 80000 |
| 232 | Ղեկասյունակի (USuSվՍՈ) արորիկի փոխարինում | 2500 |
| 233 | Ղեկասյունակի (USuSվՍՈ) առանցքային ստնու փոխարինում | 25000 |
| 234 | Ղեկասյունակի (USuSվՍՈ) խաչունկների փոխարինում | 25000 |
| 235 | Ղեկային մոխանիզմի ազդանշանի փոխարինում | 10000 |
| 236 | Ղեկասյունակի պատյանի փոխարինում | 5000 |
| 237 | Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում | 15000 |
| 238 | Ղեկային մոխանիզմի ղեկասյունակի ամրացման անտրի փոխարինում | 15000 |
| 239 | Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում | 15000 |
| 240 | Ղեկային կալունի ձգանների փոխարինում | 12000 |
| 241 | Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում | 13000 |
| 242 | ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում | 10000 |
| 243 | Հիդրոուժեղարարի հիմնական նորոգում, աշխատանքները | 35000 |
| 244 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 245 | Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում | 25000 |
| 246 | Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում | 20000 |
| 247 | Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 248 | Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում | 5000 |
| | 9. Արգելակային համակարգ | |
| 249 | Վակումային ուժեղարարի փոխարինում | 25000 |
| 250 | Վակումային ուժեղարարի փականի փոխարինում | 5000 |
| 251 | Գլխավոր գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 |
| 252 | Գլխավոր գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով | 25000 |
| 253 | Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 |
| 254 | Աշխատանքային գլանի հիմնական նորոգում | 15000 |
| 255 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 256 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 257 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 15000 |
| 258 | Հետևի սուպպորտի վերանորոգում | 15000 |
| 259 | Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում | 5000 |
| 260 | Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում | 5000 |
| 261 | Արգելակային փողրակի փոխարինում | 5000 |
| 262 | Արգելակային կոճղակների փոխարինում | 8000 |
| 263 | Արգելակային համակարգի օդահանում | 5000 |
| 264 | Սկավառակային կոճղակների փոխարինում | 8000 |
| 265 | Թմբուկային կոճղակների փոխարինում | 8000 |
| 266 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 8000 |
| 267 | Առջևի արգելակային սկավառակի հղկում 1 հատ | 9000 |

| | | |
|-----|--|-------|
| 268 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 8000 |
| 269 | Հետևի արգելակային թմբուկի հղկում 1 հատ | 15000 |
| 270 | Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 271 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում | 15000 |
| 272 | Ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 273 | Ձեռքի արգելակային ճուպանի վերանորոգում | 10000 |
| 274 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 5000 |
| 275 | ABS-ի հանում և տեղադրում | 30000 |
| 276 | ABS-ի վերանորոգում | 25000 |
| 277 | Հետևի արգելակների կարգավորում | 5000 |
| 278 | Արգելակային հեղուկի փոխարինում | 5000 |
| | 10. Էլեկտրասարքավորում | |
| 280 | Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 281 | Գեներատորի ստատորի փոխարինում | 8000 |
| 282 | Գեներատորի ռոտորի փոխարինում | 8000 |
| 283 | Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում | 8000 |
| 284 | Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում | 8000 |
| 285 | Գեներատորի առանցքակալի փոխարինում | 8000 |
| 286 | Գեներատորի փոկանիվի փոխարինում | 8000 |
| 287 | Մեկնարկիչի հանում, տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 288 | Մեկնարկիչի խարիսխի փոխարինում | 8000 |
| 289 | Մեկնարկիչի իրանի փոխարինում | 8000 |
| 290 | Մեկնարկիչի բռնիչի փոխարինում | 8000 |
| 291 | Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում | 8000 |
| 292 | Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում | 8000 |
| 293 | Մեկնարկիչի ռելեի փոխարինում | 8000 |
| 294 | Մեկնարկիչի ածուխների փոխարինում | 8000 |
| 295 | Ազդանշանի կարգավորում | 5000 |
| 296 | Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 297 | Առջևի լապտերի հանում տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 298 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | 50000 |
| 299 | Առջևի լապտերների կարգավորում | 5000 |
| 300 | Բռնկման կողպեքի հանում տեղադրում | 15000 |
| 301 | Վառոցքի կոճի հանում տեղադրում | 6000 |
| 302 | Ինդուկցիոն կոճի հանում տեղադրում | 8000 |
| 303 | Վազքաչափի ճուպանի հանում տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 304 | Չափիչ սարքերի հանում տեղադրում | 10000 |
| 305 | Ապակեվազիչի հանում տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 306 | Ապակեվազիչի շարժիչի հանում տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 307 | Ապահովիչների փոխարինում | 2000 |
| 308 | Ապակեամբարձիչների փոխարինում | 20000 |
| 309 | Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում | 20000 |
| 310 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 5000 |
| 311 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 5000 |
| 312 | Մարտկոցի կլեյմաների փոխարինում | 2000 |
| 313 | Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում | 3000 |
| 314 | Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում | 3000 |
| 315 | Էլ/ կոճակի փոխարինում | 3000 |
| 316 | Էլեկտրական շտեյկերի փոխարինում | 3000 |
| 317 | Դռների կենտրոնական փականի հանում և դեղադրում | 15000 |
| 318 | Ազդանշանային համակարգի տեղադրում | 15000 |
| 319 | Մագնիստոլային տեղադրում | 15000 |
| 320 | Վառողքային լարերի հանում և տեղադրում | 15000 |
| 321 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 25000 |
| 322 | Էլ/հաղորդալարերի հիմնական խտրցի հանում և տեղադրում | 35000 |
| 323 | Էլ/հաղորդալարերի երկրորդային խտրցի հանում և տեղադրում | 25000 |
| 324 | Ջրի ցողիչի փոխարինում | 15000 |

| | | |
|-----|---|--------|
| 325 | Բեռնախցիկի փականի փոխարինում | 10000 |
| 326 | Հագոցի փականի փոխարինում | 10000 |
| | 11. Ավտոմեքենայի սրահ | |
| 327 | Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 328 | Ռուան փականի փոխարինում | 5000 |
| 329 | Բեռնախցիկի ճոպանի փոխարինում | 5000 |
| 330 | Լամպի փոխարինում | 5000 |
| 331 | Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ | 2000 |
| | 12. Այլ ծառայություններ | |
| 332 | Եռակցման աշխատանքներ գին 1սմ (զծ.մ) համար | 5000 |
| 333 | CO զոդման աշխատանքներ գին 1 քառ. սմ-ի համար | 5000 |
| 334 | Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար | 20000 |
| 335 | Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար | 10000 |
| 336 | Կոնդիցիոների լիցքավորում | 20000 |
| 337 | Կոնդիցիոների նորոգում | 30000 |
| 338 | Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում | 10000 |
| 339 | Անիվի հանում և տեղադրում | 2000 |
| 340 | Անվադողի վերանորոգում | 5000 |
| 341 | Անիվի բալանսավորում | 2000 |
| 342 | Անիվի վալց | 5000 |
| 343 | Ռիմապակու հանում և տեղադրում կամ փոխարինում | 35000 |
| 344 | Ապակիների թաղանթապատում գին 1քմ | 15000 |
| 345 | Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար | 2500 |
| | SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | |
| | 1.Շարժիչ | |
| 1 | Շարժիչի գլխիկ | 900000 |
| 2 | Բարձիկ | 70000 |
| 3 | Շարժիչի գլխիկի միջադիր | 35000 |
| 4 | Շարժիչի միջադիրների կոմպլեկտ | 110000 |
| 5 | Շարժիչի փական դուրս մղող | 5000 |
| 6 | Շարժիչի փական ներս մղող | 5000 |
| 7 | Շարժիչի փականի խտաբուկ | 5000 |
| 8 | Փականի զպանակ | 5000 |
| 9 | Ծնկաձև լիսեռ | 400000 |
| 10 | Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի | 15000 |
| 11 | Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի | 15000 |
| 12 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 15000 |
| 13 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 15000 |
| 14 | Մխոց | 80000 |
| 15 | Մխոցային օղակներ | 75000 |
| 16 | Մխոցային մատ | 20000 |
| 17 | Ատամնանիվ | 15000 |
| 18 | Ատամնավոր փոկ | |
| 19 | Շարժիչի կափույր | 50000 |
| 20 | Շարժիչի կափույրի կափարիչ | 80000 |
| 21 | Շարժիչի շղթա | 50000 |
| 22 | Շարժիչի պաշտպանիչ | 35000 |
| 23 | Փոկի ձգիչ | 55000 |
| 24 | Հիդրոձգան | 35000 |
| 25 | Հրիչ | 45000 |
| 26 | Շարժիչի հիդրոհրիչ | 35000 |
| 27 | Շարժիչի կարուն | 25000 |
| 28 | Շարժիչի հանդարտիչ | 35000 |
| 29 | Շարժիչի հոլովակ | 15000 |
| 30 | Շարժիչի հոլովակի առանցքակալ | 19000 |
| 31 | Շարժիչի առջևի կափարիչ | 36000 |

| | | |
|--|--------------------------------------|--------|
| 32 | Շարժիչի վերևի կափարիչ | 80000 |
| 33 | Շարժիչի վերևի կափարիչի միջադիր | 30000 |
| 34 | Թափանիվ | 120000 |
| 35 | Շարժաթև | 25000 |
| 36 | Ատամնանիվ բաշխիչ լիսեռի | 20000 |
| 37 | Ատամնանիվ ծնկաձև լիսեռի | 15000 |
| 38 | Փոկանիվ ծնկաձև լիսեռի | 15000 |
| 39 | Փոկանիվ | 15000 |
| 40 | Սովխարիկ փականի | 5000 |
| 41 | Գլխիկի բոլս | 5000 |
| 42 | Ծնկաձև լիսեռի բոլս | 56000 |
| 43 | Պարկուճ (չՌԿՖՅՈ) | 6000 |
| 44 | Քարտեր | 25000 |
| 45 | Փական յուղի տարայի | 5000 |
| 46 | Խուփ ընդարձակման բաքի | 5000 |
| 47 | Խուփ շարժիչի | 5000 |
| 48 | Թաթիկ յուղի մղիչի | 5000 |
| 49 | Բարձիկ փ/տուփի | 30000 |
| 50 | Յուղի մղիչ | 45000 |
| 51 | Միջադիր յուղի մղիչի | 15000 |
| 52 | Յուղի ծորակ | 15000 |
| 53 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 150000 |
| 54 | Բ/լիսեռի կափարիչ | 25000 |
| 55 | Բ/լիսեռի խտաբուկ | 15000 |
| 56 | Շարժիչի բ/լիսեռի ականոց | 10000 |
| 57 | Շարժիչի բ/լիսեռի երիթակ | 10000 |
| 58 | Ուղղորդիչ վռան | 9000 |
| 59 | Շարժիչի գամասեղ | 8000 |
| 60 | Գլխիկի միջադիր | 19000 |
| 2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | |
| 66 | Յուղի պոմպ | 50000 |
| 67 | Յուղի պոմպի շարժաբեր | 15000 |
| 68 | Յուղի ռադիատոր | 35000 |
| 69 | Յուղի փողրակ | 15000 |
| 70 | Յուղի ծորակ | 10000 |
| 71 | Վառոցքի կոճ | 36000 |
| 72 | Արտաձման կալեկտոր աջ | 50000 |
| 73 | Արտաձման կալեկտոր ձախ | 50000 |
| 74 | Ներաձման կալեկտոր աջ | 50000 |
| 75 | Ներաձման կալեկտոր ձախ | 50000 |
| 76 | Արտաձման կալեկտորի աջ միջադիր | 25000 |
| 77 | Արտաձման կալեկտորի ձախ միջադիր | 25000 |
| 78 | Ներաձման կալեկտորի աջ միջադիր | 25000 |
| 79 | Ներաձման կալեկտորի ձախ միջադիր | 25000 |
| 80 | Վառոցքի մոմ | 8500 |
| 81 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանց | 5000 |
| 82 | Բենզոմղիչ | 60000 |
| 83 | Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի | 120000 |
| 84 | Ինժեկտորի բոցամուղ դիզելային շարժիչի | |
| 85 | Բոցամուղի խտաբուկ | 10000 |
| 86 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման | 45000 |
| 87 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչ | 25000 |
| 88 | Վառելանյութի խողովակ | 25000 |
| 89 | Աքսելերատորի ճոպան | 15000 |
| 90 | Օդի զտիչ | 12000 |
| 91 | Օդի ձախսաչափիչ | 65000 |
| 92 | Օդի զտիչի փողրակ | 25000 |

| | | |
|-----|--|-------|
| 93 | Ջերմաստիճանային տվիչ | 25000 |
| 94 | Յուղի տվիչ | 25000 |
| 95 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 25000 |
| 96 | Օդի ծախսի տվիչ | 25000 |
| 97 | Արագաչափի տվիչ | 25000 |
| 98 | Հովհարի տվիչ | 20000 |
| 99 | Ջրի խողովակ երկար | 20000 |
| 100 | Ջրի խողովակ կարճ | 15000 |
| 101 | Ջրի տվիչ | 15000 |
| 102 | Բենզոբաքի տվիչ | 15000 |
| 103 | Մարման ընթացքի կարգավորիչ | 15000 |
| 104 | Ղեկավարման համակարգիչ | 15000 |
| 105 | Պարապ ընթացքի տվիչ | 15000 |
| 106 | Թթվածնի տվիչ | 15000 |
| | 3. Սառեցման և արտածման համակարգ | |
| 115 | Հովհար | 80000 |
| 116 | Հովհարի շարժիչ | 40000 |
| 117 | Հովհարի թևանիվ | 25000 |
| 118 | Ռադիատոր | 80000 |
| 119 | Ընդարձակող բաքի փական | 5000 |
| 120 | Ընդարձակող բաքի փողրակ | 15000 |
| 121 | Ընդարձակող բաք | 35000 |
| 122 | Ռադիատորի փողրակ ներքևի | 20000 |
| 123 | Ռադիատորի փողրակ վերևի | 15000 |
| 124 | Թերմոստատ | 20000 |
| 125 | Ջրի մղիչ | 65000 |
